ԹԵՄԱ 1

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1.3 Աշխարհագրական հետազոտության հիմնական մեթոդները

1. Այն արդիական է դարձել հատկապես միջազգային զբոսաշրջության զարգացման շնորհիվ, երբ աշխարհի շատ երկրների ու շրջանների բնության, բնակչության և տնտեսության ինքնատիպության վերաբերյալ տրվում են համալիր գիտական տեղեկություններ:

2. Այսպիսով, պատմական մեթոդը կամ պատմականության սկզբունքը օգնում է բացահայտելու բնական և հասարակական երևույթների փոփոխությունները և զարգացումը ժամանակի մեջ:

Աշխարհագրական թաղանթում են ծագել ու զարգացել մարդը, մարդկային հասարակությունը՝ սերտ փոխազդեցության մեջ գտնվելով շրջակա միջավայրի հետ: Աշխարհագրական թաղանթի երկարատև պատմական զարգացման ընթացքում նկատելի են դարձել այդ թաղանթի գլխավոր առանձնահատկությունները՝ ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմականությունը և նյութերի շրջապտույտը:

Այսպիսով, բնական միջավայրի արդի վիճակը ճիշտ գնահատելու համար հարկավոր է ներկայացնել աշխարհագրական թաղանթի զարգացման և բնության ու մարդու փոխազդեցության պատմությունը, հնէաշխարհագրական՝ լանդշաֆտային, կլիմայական քարտեզների միջոցով հետազոտել տարբեր տարածաշրջանների բնական պայմանները, բացահայտել փոփոխությունների պատճառները, աշխարհագրական թաղանթի ինքնազարգացման և ինքնակարգավորման օրինաչափությունները և ինքնավերականգնման հնարավորությունները:

Կլիմայի, բուսականության ու կենդանական աշխարհի տևական փոխազդեցությամբ է պայմանավորված մի շարք հանքանյութերի առաջացումը: Դիտարկենք քարածխի օրինակով. Անտարկտիդայի ընդերքում քարածխի առկայությունն առաջին հայացքից զարմանալի է թվում, չէ՞ որ դրա հիմքում է երկրաբանական զարգացման պատմությունը՝ որպես պալեոզոյան և մեզոզոյան դարաշրջաններում այլ կլիմայի, բուսականության ու կենդանական աշխարհի վկայություն: Գիտնականներն ապացուցում են, որ քարածուխն ունի

բուսական ծագում: Այն հաստատվեց նաև մանրադիտակի գյուտով. գիտնականները նկատեցին ածխացած փայտի հյուսվածքը, խեժի հատիկները և այլն: Քարածխի առաջացման ժամանակաշրջանում վիթխարի հասակ են ունեցել սիգիլարիաները, թեփուկածառազգիները (լեպիդոդենտրոնները), պտերանմանները, ձիաձետերը, որոնք տաք ու խոնավ կլիմայի պայմաններում քայքայվել են, փտել և գոյացել է քարածուխը:

Հասարակական աշխարհագրական երևույթների համար կարևոր են զարգացման պատճառները, նախադրյալները և դրանց օգտագործման հնարավորությունները:

Հասարակության զարգացումը հանգեցրել է աշխատանքի հասարակական բաժանման. որսորդությունից առանձնացել է անասնապահությունը, հավաքչությունից՝ երկրագործությունը, երկրագործությունից՝ անասնապահությունը, դրանցից էլ՝ արհեստները, առևտուրը (վաճառականությունը):

3. ԱՄՆ-ի պատմական զարգացման առանձնահատկություններով է պայմանավորված աշխարհում տնտեսապես ամենահզորը լինելը: Երկու աշխարհամարտ շրջանցեցին ԱՄՆ-ի տարածքը, այն դեպքում, երբ Եվրոպայի մի շարք տարածաշրջաններում (հատկապես ԽՍՀՄ-ը՝ Երկրորդ աշխարհամարտում) և Ասիայի մի մասում տասնյակ միլիոնավոր մարդիկ զոհվեցին (Ճապոնիայում մինչև հիմա պահպանվել են ճառագայթման հետևանքները), տնտեսությունը հիմնովին ավերվեց ու քայքայվեց և շատ տեղերում հարկավոր էր սկսել զրոյից:

4. Գերմանացի հայտնի բնագետ Ալեքսանդր Հումբոլդտն առաջին անգամ իր հավաքած փաստական նյութի և դիտարկումների հիման վրա ցույց տվեց համեմատական մեթոդի նշանակությունը տարբեր երկրների և լանդշաֆտների տարբերիչ գծերի բացահայտման և դրանց պատճառների բացատրման գործում:

Աշխարհագրական թաղանթի տարածքային միավորները, դրանց բաղադրիչները, երևույթները, գործընթացներն իրարից տարբերվում են մեկ կամ մի քանի հատկանիշով, իսկ այդ տարբերությունների բացահայտումը հնարավոր է միայն իրար հետ համեմատելու միջոցով. «Ամեն ինչ ճանաչվում է համեմատության մեջ», սակայն ամեն ինչ չէ, որ կարելի է համեմատել: Համեմատվող օբյեկտներն ու երևույթները պետք է լինեն համեմատելի. քաղաքը՝ քաղաքի, լանդշաֆտը՝ լանդշաֆտի, լիճը՝ լճի, պետությունը՝ պետության հետ և այլն: Կարևոր սկզբունք է օբյեկտների համեմատությունն առավել էական հատկանիշներով: Օրինակ՝ լճի համար էական հատկանիշներ են լճային գոգավորության ծագումը, զբաղեցրած մակերեսը, լճի ջրի քիմիական կազմը,

ռեժիմը, լճի խորությունը, օրգանական աշխարհը, ծովի մակարդակից բարձրությունը և այլն:

5. Աշխարհագրության մեջ թվերը շատ կարևոր են բնական և հատկապես սոցիալ-տնտեսական օբյեկտների և երևույթների քանակական և որակական առանձնահատկությունները, ցուցանիշները ներկայացնելու համար: Թվերն աշխարհագրական հասկացությունները յուրացնելու, համեմատելու չափանիշներ են: Վիճակագրական-տնտեսական տվյալները շատ կարևոր նշանակություն ունեն երևույթներին որոշակիություն, կոնկրետություն և գիտականություն հաղորդելու առումով: «Առատ տեղումներ», «գետային խիտ ցանց», «մեծ քաղաք», «բնակչության բարձր խտություն», «նավթի արդյունահանման կամ արտահանման մեծ ծավալ», «պղնձի հանքաքարի զգալի պաշարներ» արտահայտությունները ոչինչ չեն ասում, քանի դեռ դրանց կոնկրետ մեծությունները չեն նշվում: Այդ ցուցանիշների իմացությունը հնարավորություն է ընձեռում գնահատելու երևույթները և համեմատելու տարբեր տարածքներ ու պետություններ: Վիճակագրական տվյալները մեծության չափանիշ են ծառայում, դրանք երևույթները ներկայացնում ու դարձնում են համոզիչ և ապացուցելի:

6. Այսպիսով, վիճակագրականը աշխարհագրական հետազոտության քանակական մեթոդ է և զբաղվում է քանակական ելակետային տվյալների հավաքմամբ, մշակմամբ և վերլուծությամբ: Հարկ է նշել, որ մեթոդը կիրառում են գիտության այլ ճյուղերում ևս:

Ներկայում արագորեն զարգանում են մաթեմատիկական վիճակագրական մեթոդները, որոնք ավելի հուսալի և ճշգրիտ են դարձնում հետազոտությունները: Դեռևս Ստրաբոնն էր ասել, որ աշխարհագրությունը խորությամբ յուրացնելու համար անհրաժեշտ են մաթեմատիկական գիտելիքներ: